

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Բողոք բերող անձ՝
Հայցվոր՝
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյդոյան
ՀՎՀՀ 02568394
ՊԳՎ՝ թիվ 211 171 01863
Հասցե՝ Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Ծանուցման հասցե՝ Երևան, Մաշտոցի 33/1, 12
Հեռ. 010-56-03-60, e-mail: foi@foi.am

Ներկայացուցիչ՝
Կարեն Մեժլումյան
Փաստաբանի արտոնագիր՝ 110
Հասցե՝ Երևան, Մաշտոցի 33/1, 12 տարածք
Հեռախոս՝ 50-18-08, 077-073-073
e-mail: karen-mezhlumyan@mail.ru

Գործին մասնակցող անձինք՝
Պատասխանողներ՝
«Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ տնօրեն՝
Վազգեն Հարությունյան
Հասցե՝ Երևան, Ադոնց 2

«Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ
Հասցե՝ Երևան, Ադոնց 2

Բողոքարկվող դատական ակտ՝
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի թիվ
ՎԴ/0015/05/14 գործով 14.03.2014թ. որոշում

22.03.2014թ.

Վ Ճ Ռ Ա Բ Ե Կ Բ Ո Ղ Ո Ք

Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին միջանկյալ ակտի՝ որոշման դեմ

I. Գործի դատավարական նախապատմությունը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ Հայցվոր) հայցով դիմել ընդդեմ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ տնօրեն՝ Վազգեն Հարությունյանի և «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի, խնդրելով. «Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը:

Պահանջվող տեղեկատվության տրամադրումը «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ տնօրեն՝ Վազգեն Հարությունյանի կողմից մերժելու համար վերջիններիս ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 դրամի չափով:

Պարտավորեցնել պատասխանողին տրամադրել հայցվող տեղեկատվությունը»:

Վարչական դատարանի 16.01.2014թ. որոշմամբ հայցադիմումը «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերության տնօրեն Վազգեն Հարությունյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով վերադարձվել է, իսկ իրավունքի խախտման փաստը ճանաչելու և հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2014թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի. հայցադիմումը մասով վերադարձնելու մասով վերացվել է ՀՀ վարչական դատարանի 16.01.2014թ. «Հայցադիմումը մասով վերադարձնելու, մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը, իսկ մնացած՝ իրավունքի խախտման փաստը ճանաչելու և հայցվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասով բողոքը մերժել:

Վերաքննիչ դատարանի որոշումը ստացվել է 18.03.2014թ-ին:

Սույն բողոքը բերվում է օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում, հիք ընդունելով նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի հետևյալ դրույթը. «Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը»:

II. Պատճառաբանական մաս

1. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Հայցվոր) հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածներին, 21.11.2013թ-ին թիվ 211-ի 6 հարցմամբ դիմել է «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ (այսուհետ՝ ՓԲԸ) տնօրեն Վազգեն Հարությունյանին, խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 20.11.2013թ.-ի դրությամբ Երեւան քաղաքի ո՞ր փողոցներում եւ ո՞ր փողոցների ո՞ր հատվածներում են առկա օրենքին եւ ՀՀ կառավարության որոշումներին համապատասխանող՝ առանձնացված վճարովի ավտոկայանատեղեր,
2. Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար նկարահանող սարքերը Երեւան քաղաքի ո՞ր փողոցների ավտոկայանատեղերում են տեղադրված,
3. Խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերում տեղադրված յուրաքանչյուր նկարահանող սարքի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի (օրենք, որոշում, կարգադրություն եւ այլն) պատճենը:

2) Ստացվել է ՓԲԸ-ի տնօրեն Վազգեն Հարությունյանի 25.11.2013թ. պատասխանն այն մասին, որ ՓԲԸ-ն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն չի հանդիսանում տեղեկատվության տնօրինող և այդ օրենքն Ընկերության վրա չի տարածվում, ուստի հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել:

Նշված փաստերը հաստատվում են ԻԱԿ-ի հարցմամբ և ՓԲԸ-ի պատասխանով:

3) Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի՝ հայցադիմումը մասով վերադարձնելու մասով վերացրել է ՀՀ վարչական դատարանի 16.01.2014թ. «Հայցադիմումը մասով վերադարձնելու, մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը, իսկ մնացած մասով բողոքը մերժել:

4) Առկա են հակասական դատական ակտեր այն մասին, թե վարչական դատավարության կարգով կարո՞ղ է իրավունքի խախտման փաստը ճանաչելու մասին պահանջ քննության առնվել, թե ոչ: Մասնավորապես, թիվ ՎԴ/0480/05/10 գործով վարչական դատարանի 22.06.2011թ. վճռով քննության է առնվել նաև իրավունքի խախտման փաստի ճանաչելու մասին պահանջը և դատարանը վճռել է. «*Լևոն Բարսեղյանի հայցը բավարարել՝ ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանի կողմից հայցվորի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:*

Պարտավորեցնել...»:

2. Վճռաբեկ բողոքի փաստարկները և իրավական հիմնավորումները

1) Իրավունքի խախտման փաստը ճանաչելու մասին հայցապահանջի ընդունումը մերժելով վարչական դատարանը պատճառաբանել է, որ այդ պահանջը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ճանաչման հայցով, որպիսի պահանջ կարող է ներկայացվել, եթե հայցվորը գրկված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-68-րդ հոդվածներով սահմանված կարգով հայց ներկայացնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը կիսել է այս մոտեցումը, այդ մասով մերժելով վերաքննիչ բողոքը և պատճառաբանել է. «*Իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջի կապակցությամբ Վերաքննիչ դատարանը փաստում է հետևյալը:*

ՀՀ վարչական դատարանի վիճարկվող՝ 16.01.2014թ. որոշման ժամանակ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

Այսինքն, ճանաչման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից, որպես նախապայման սահմանվել է՝ ՀՀ վարչական դատավարության 66-68-րդ հոդվածներին համապատասխան վիճարկման, պարտավորեցման և գործողության կատարման հայց ներկայացնելու անհնարինությունը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ղատարանի որոշումը հիմնավոր է, քանի որ բողոքաբեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունն զրկված չի եղել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-68-րդ հոդվածների /մինչև 07.01.2014թ. գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-67-րդ հոդվածների/ հիմքով հայց ներկայացնելու հնարավորությունից: Առավել ևս, որ սույն հայցադիմումով արդեն իսկ ներկայացվել է գործողության կատարման հայց, այն է՝ պարտավորեցնել պատասխանողին տրամադրել հայցվող տեղեկությունը:

Ուստի, Վերաքննիչ դատարանի կարծիքով, իրավունքի խախտման փաստի հաստատման պահանջի ընդունումը ենթակա է մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, ինչը և իրավացիորեն կատարվել է Վարչական դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է բողոքաբերի մատնանշած մեկ այլ վարչական գործով դատարանի արտահայտած իրավական այլ դիրքորոշմանը, ապա Վերաքննիչ դատարանը նշում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով՝ իր կողմից պարտադիր կիրառման են ենթակա միայն ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները»:

Ակնհայտ է, որ վերաքննիչ դատարանն էլ է ընդունում, որ բարձրացված հարցի վերաբերյալ առկա է հակասական դատական պրակտիկա, ուստի գտնում են, որ դա հիմք է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար:

Գտնում են, որ օրենքի նման մեկնաբանությամբ խախտվում է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով երաշխավորված՝ հայցվորի խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի, 19 հոդվածով երաշխավորված գործի արդարացի քննության իրավունքները, այլև՝ Սահմանադրության 1-ին և 6-րդ հոդվածներով երաշխավորված՝ օրենքի որոշակիության սկզբունքը:

Ղատարանի նման դիրքորոշումը հակասում է նաև թիվ ՎՂ/0480/05/10 գործով վարչական դատարանի 22.06.2011թ. վճռով արտահայտած իրավական դիրքորոշմանը:

Այսպես, նշված գործով դատարանը վճռել է. «*Լևոն Բարսեղյանի հայցը բավարարել՝ ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանի կողմից հայցվորի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը:*

Պարտավորեցնել...»:

Վճռի մեզ հետաքրքրով մասի վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը հետևյալն է. «Տեղեկատվություն ստանալու մասին գրավոր հարցում ներկայացնելով՝ հայցվորը կարող էր և իրավունք ուներ ակնկալելու, որ իրավական պետություն հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում, որտեղ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է տեղեկատվություն ստանալու անձի իրավունքը, ոչ ուշ, քան նախատեսված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, ինքը կստանա իր հարցումների սպառիչ պատասխանները: Մինչդեռ, ինչպես հաստատվեց դատաքննությամբ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով որևէ պատասխան չի ներկայացրել Լևոն Բարսեղյանին:

... Այսպիսով, դատարանը հաստատված և անհերքելի է համարում հայցվորի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստի առկայությունը, հետևաբար նշված փաստը ճանաչելու հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Սույն գործով հայցադիմումի ընդունումը մերժելով դատարանը նաև պատճառաբանել է, որ. «... իրավունքի խախտման փաստի ճանաչումը ներառված է և տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, և վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մեջ, քանի որ նշված երկու պահանջների քննության շրջանակներում պարզման ենթակա հանգամանք է հանդիսանում այն հարցը, թե տեղեկատվությունը տնօրինողը խախտել է արդյոք անձի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը»:

Նշված մեկնաբանությամբ ևս չի վերանում դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտումը, քանի որ եթե պատասխանողը, հատկապես վարչական մարմինը մինչև վճիռ կայացնելը կատարում է հայցադիմումում նշված պահանջը, ինչի արդյունքում դատարանը կարճում է գործի վարույթը և չի անդրադառնում հայցվորի իրավունքի խախտման փաստին, հայցվորը չի կարող «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ գլխի պահանջին համաձայն վարչարարությամբ իրեն պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնել կամ նման պահանջ ներկայացնելու համար առնվազն պետք է իրավունքի խախտման փաստը ճանաչելու հայցապահանջ ներկայացնել դատարանը և այդ գործի ավարտից հետո միայն դիմի վնասի հատուցման պահանջով, այսինքն առնվազն երեք տարբեր դատական գործեր պետք է քննության առնվեն, մինչև որ լուծում տրվի վնասի հատուցման վերաբերյալ պահանջին: Այսպիսով ակնհայտ է, որ վարչական գործերով նման մեկնաբանությամբ կխախտվի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, որը ներառում է նաև ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքը:

2) Թեև վերաքննիչ դատարանը վերացնելով վարչական դատարանի որոշման՝ հայցադիմումը վերադարձնելու մասին, որը վերաբերում է «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելուն, այնուամենայնիվ չի վերացրել բողոքարկված որոշման այն մասը, որով մերժվել է տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու մասով հայցի ընդունումը:

Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի կապակցությամբ վերաքննիչ դատարանը բողոքը մերժել է հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 10-րդ հոդվածներին ու 26-րդ գլխին, պատճառաբանել, որ. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուժով յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավունք է վերապահված դիմել ՀՀ վարչական դատարան այն դեպքում, երբ նա համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (հանրային

իրավահարաբերություններից ծագող գործեր):

Վերոգրյալից հետևում է, որ հանրային իրավահարաբերություններից ծագող գործերը բաժանվում են երեք խմբի՝

1. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք ընդդեմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց.
2. վարչական մարմիններն ընդդեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց.
3. վարչական մարմիններն ընդդեմ վարչական մարմինների:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությունը վերոշարադրյալ խմբի մեջ չի մտնում և չի հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, ուստի տեղեկատվություն տրամադրելու պահանջը տվյալ ընկերության կողմից դուրս է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված առարկայական ընդհատության շրջանակներից, ուստի՝ ՀՀ վարչական դատարանի կողմից նշված պահանջի ընդունումը մերժելը ևս հիմնավոր է:

Ինչ վերաբերում է բողոքում նշված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորմանը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցադիմումը չվերահասցեագրելու հանգամանքը հայցադիմումի ընդունումը մերժելու որոշումը վերացնելու հիմք հանդիսանալ չի կարող, քանի որ, ամեն դեպքում, նշված պահանջը չի կարող քննվել Վարչական դատարանում»:

Այս կապակցությամբ նշեմ, որ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջը հաջորդում է վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջին, այսինքն հետևանք, ածանցյալ պահանջ է, ուստի նման պատճառաբանությամբ հայցադիմումի ընդունը և բողոքը մերժելով խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի հայցվորի իրավունքը, որը ներառում է նաև ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքը:

Բանը նրանում է, որ հակառակ դեպքում հայցվորը ստիպված կլինի տարբեր դատարաններում մի քանի դատական գործեր նախաձեռնել, մի կողմից պահանջվող տեղեկատվությունը ստանալու համար, մյուս կողմից տեղեկատվությունը չտրամադրած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, երրորդ դեպքում վնասի հատուցման պահանջի համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40 հոդվածի համաձայն. «Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ»:

Ակնհայտ է, որ եթե նման պահանջ կա, ապա դատարանը պարզելով այն փաստը, որ հայցադիմումում նշված անձը կատարել է վարչական իրավախախտում, ոչ միայն նրան պետք է ենթարկի վարչական պատասխանատվության, այլ նաև նրան պարտավորեցնի կատարելու այն պարտականությունը, որը չկատարելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ղա բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածից, որը վերաբերում է հետևանքների վերացման վերաբերյալ ածանցյալ պահանջին:

Ըստ էության վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ձանաչման հայց չէ, հետևաբար նման պահանջի գործով նույն Օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված ածանցյալ պահանջներ չեն կարող ներկայացվել:

Ինչպես վերը նշվել է, նման մոտեցումը հակասում է Սահմանադրության 18 հոդվածին:

Ածանցյալ պահանջի վերաբերյալ առկա է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 3 փետրվարի 2009թ. թիվ ՍԴՈ-787 որոշումը, որի համաձայն. «1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ձանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների

պահանջներին հակասող և անվավեր»:

Առկա է նաև ՀՀ դատարանների նախագահների խորհուրդի 2008թ. դեկտեմբերի 22-ի թիվ 123 որոշումը, որում մասնավորապես նախատեսված է, որ. «այն դեպքերում, երբ դատարան է ներկայացվել հայցադիմում, որը վերաբերում է տարբեր դատարաններին ընդդատյա (քաղաքացիական, ընդհանուր իրավասության և վարչական դատարանների առարկայական ընդդատություն) միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճին, ապա գործը քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը»:

Հիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է հետևանք ներկայացնող պահանջների լուծման ելքը»:

Թեև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումներից հետո ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրք է ընդունվել, բայց իրավական կարգավորումները մնացել են նույնը, ուստի վերջինիս դրույթները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին համապատասխան: Տվյալ դեպքում հաշվի առնելով նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի իրավակարգավորումը, տեղեկատվություն տրամադրելու պահանջը, որպես վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջից ածանցյալ պահանջ ընդդատյա է և պետք է քննության առնվի ՀՀ վարչական դատարանում:

Բողոքում հարց էր բարձրացվել նաև այն մասին, որ եթե անգամ ընդունենք, որ տեղեկատվություն տրամադրելու պահանջը վարչական դատարանին ընդդատյա չէ, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81 հոդվածի համաձայն հայցադիմումը պետք է վերահասցեագրվեր այն դատարանին, որին ընդդատյան է գործը, ինչը չանելով էլ բողոքարկվող որոշմամբ խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի պահանջը:

Բողոքի նշված պատճառաբանությունը վերաքննիչ դատարանը մերժել է հետևյալ կերպ. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցադիմումը չվերահասցեագրելու հանգամանքը հայցադիմումի ընդունումը մերժելու որոշումը վերացնելու հիմք հանդիսանալ չի կարող, քանի որ, ամեն դեպքում, նշված պահանջը չի կարող քննվել Վարչական դատարանում»:

Բանը նրանում է, որ շատ դեպքերում դատարան դիմելու կամ հայցային վաղեմության ժամկետների խնդիր է առաջանում և անհրաժեշտ է, որ եթե վարչական դատարանը գտնում է, որ ներկայացված հայցապահանջը իրեն ընդդատյա չէ, ապա պետք է հայցադիմումը վերահասցեագրի և ոչ թե դրա ընդունումը մերժի և վերջ: ՀՀ սահմանադրության 18 և 19 հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և արդար դատաքննության իրավունքից է բխում, որ վարչական դատարան դիմած անձը պետք է դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի խախտման դեպքում այդ խախտումից իր իրավունքների պաշտպանության համար դատավարական որոշակի միջոցից օգտվելու հնարավորություն ունենա:

3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները

Գտնում են, որ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես, առկա են բողոքը վարույթ ընդունելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հիմնավորումները:

Այսպես, տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտերում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ, այն է՝ մի դեպքում իրավունքի խախտման փաստը ճանաչելու մասին հայցապահանջը ընդունվել է քննության և բավարարվել է, իսկ այս դեպքում հայցադիմումի ընդունումը մերժվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80 հոդվածի 1-ին մասի 1-ին կետին հղում կատարելով, այսինքն այս դեպքում վարչական դատարանը գտել է, որ նման պահանջով հայցը

ենթական չէ դատարանում քննության, այն դեպքում, երբ թիվ ՎԴ/0480/05/10 գործով վարչական դատարանը գտել էր, որ համանման պահանջով գործը ենթակա է վարչական դատարանում քննության, ավելին, այն քննելով հայցը բավարարել էր:

Ինչպես բողոքի պատճառաբանական մասում նշեցել ենք ՀՀ սահմանադրական դատարանի 3 փետրվարի 2009թ. թիվ ՍԴՈ-787 որոշմամբ. «1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»:

Այդ ժամանակ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը բաղկացած էր միայն 8-րդ հոդվածից, որը վերաբերում էր գործերի առարկայական ընդդատությանը և սահմանադրական դատարանում այդ նորմի սահմանադրականությունը բարձրացվել էր ածանցյալ պահանջների ընդդատության առումով:

Սույն գործով բողոքում բարձրացված հարցը նույնպես վերաբերում է ածանցյալ պահանջի ընդդատությանը և վերաքննիչ դատարանն էլ կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը, որը նույնպես վերաբերում է գործի առարկայական ընդդատությանը:

Այսպիսով գործ ունենք տարբեր, այժմ գործող և նախկին օրենսգրքերի միևնույն իրավակարգավորման հետ և այդ իրավակարգավորման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման հետ, որին հակասող սահմանադրաիրավական բովանդակությամբ էլ վերաքննիչ դատարանի կողմից կիրառվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը:

Գտնում են նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի իրավունքի զարգացմանը, որի վերաբերյալ հիմնավորումները բերված են բողոքի 2-րդ մասում:

Գտնում են, որ վերը նշված խախտումները հիմք են բողոքարկվող որոշումը վերացնելու համար, ուստի ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և 80-րդ հոդվածի և 23-րդ Գլխի կանոններով

Խնդրում են՝

Կայացնել նոր դատական ակտ, վերացնել հայցադիմումի ընդունումը մերժելու մասին ՀՀ վարչական դատարանի ՎԴ/0015/05/14 գործով 16.01.2014թ. որոշումը: Եթե դրա համար անհրաժեշտ է, վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2014թ. որոշումը:

Կից ներկայացվում են՝

1. Բողոքարկվող որոշման և ծրարի պատճենները
2. Բողոքը ՀՀ վաչական վերաքննիչ դատարան և պատասխանողներին ուղարկելու ապացույցներ
3. Բողոքի էլեկտրոնային տարբերակը՝ կրիչը:
4. Թիվ ՎԴ/0480/05/10 վարչական գործով ՀՀ վարչական, ՀՀ վարչական վերաքննիչ և վճռաբեկ դատարանի որոշումների էլեկտրոնային տարբերակը, վերցված www.datalex.am կայքից:
5. Լիազորագիրը և փաստաբանի արտոնագրի պատճենը գտնվում են գործի մեջ:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝

Կարեն Մեժլումյան